



Երեխաների Պատվաստում COVID-19-ի Դեմ. Pfizer կամ Moderna պատվաստանյութը ստանալուց հետո



Պատվաստման Զիմնական Կողմնակի Ազդեցությունները

- Պատվաստանյութը ստանալուց հետո ձեր երեխայի մոտ կարող են դրսևորվել կողմնակի ազդեցություններ: Դրանք կարող են սահմանափակել երեխայի որոշ առօրյա գործողությունները, սակայն պետք է անհետանան մի քանի օրվա ընթացքում:
- Հիմնական կողմնակի ազդեցությունները ներառում են ձեռքի ցավ, այտուց կամ կարմրություն ներարկման հատվածում, մկանների կամ հոդերի ցավ, ավշային հանգույցների այտուց, ջերմություն, դող, գլխացավ, անհանգիստ վիճակ կամ լաց, հոգևածություն, քնկոտություն և ախորժակի կորուստ:
- Կարևոր է ստանալ բոլոր առաջարկվող դեղաչափերը, նույնիսկ եթե նրանց մոտ դրսևորվել են կողմնակի ազդեցություններ, քանի դեռ պատվաստանյութ մատակարարողը կամ բժիշկը չեն հորդորել չպատվաստել երեխային:
- Պատվաստանյութի կողմնակի ազդեցությունները բնական նշան են, որ մարմինը ստեղծում է անվարակուսակություն: Ոչ բոլորի մոտ են դրսևորվում դրանք:

Խորհուրդներ, որոնք կօգնեն կողմնակի ազդեցությունների ծամանակ

- Եթե ձեր երեխան ունի ցավ կամ անհանգիստ է, դրեք մաքուր, սառը, խոնավ կտոր պատվաստանյութի ներարկման հատվածում: Ներարկման շրջանի վերջույթների մարզանքը նույնպես կարող է օգնել:
- Առանց դեղատոմսի վաճառվող դեղամիջոցները, ինչպիսիք են Tylenol®-ը (ացետամինոֆեն) կամ Motrin®-ը կամ Advil®-ը (իբուպրոֆեն), կարող են օգնել ցավի, ջերմության, գլխացավի կամ անհանգստության դեպքում:

Ե՞րբ զանգահարել ձեր երեխայի բժշկին

Կապ հաստատեք ձեր երեխայի բժշկի հետ, եթե՝

- Ներարկման հատվածում ցանկացած կարմրություն կամ ցավ վատթարանում է 1-2 օր անց
- Կողմնակի ազդեցությունները անհանգստացնում են կամ չեն անհետանում մի քանի օր անց:



Հազվադեպ հանդիպող, լուրջ կողմնակի ազդեցություններ

Ալերգիկ Հակազդեցություններ

Ինչպես ցանկացած դեղորայքի դեպքում, հազվադեպ է պատահում, սակայն, հնարավոր է ունենալ լուրջ հակազդեցություն, ինչպես օրինակ՝ շնչարգելություն կամ խզզոց, ցան կամ բշտիկներ, կոկորդի կամ լեզվի այտուցվածություն: Նման իրավիճակի տեղի ունենալը քիչ հավանական է: Սակայն, եթե դա տեղի ունենա, անհապաղ դիմեք բուժօգնության՝ զանգահարելով 911:

Միոկարդիտ և Պերիկարդիտ

Pfizer կամ Moderna պատվաստանյութը ստացած որոշ մարդկանց մոտ առաջացել են միոկարդիտ (սրտամկանի բորբոքում) և պերիկարդիտ (սրտապարկի բորբոքում): Դեպքերի մեծ մասը տեղի է ունեցել 12-ից 39 տարեկան տղամարդկանց շրջանում: Նման իրավիճակի տեղի ունենալը քիչ հավանական է: Ավելի ուշ (8 շաբաթ անց) պատվաստանյութի երկրորդ դեղաչափը ստանալը նվազեցնում է 12+ տարեկան պատանիների մոտ սրտի հետ կապված այս հազվադեպ խնդիրների վտանգը:

Անմիջապես դիմեք բուժօգնության, եթե ձեր երեխայի մոտ դրսևորվում է հետևյալ ախտանիշներից որևէ մեկը.

- Ցավ կրծքավանդակում
- Շնչարգելություն
- Արագ սրտխփոցի, սրտի անկանոն կամ ուժեղ բաբախի զգացողություն: Այս մարդկանց մեծամասնության մոտ ախտանիշները հայտնվել են պատվաստանյութի երկրորդ դեղաչափը ստանալուց հետո մի քանի օրվա ընթացքում:

Գրանցվեք v-safe-ում՝ CDC-ի առողջական վիճակի ստուգման համակարգում

Եթե ունեք սմարթֆոն, հնդրում ենք գրանցվել vsafe.cdc.gov –ում ցանկացած կողմնակի ազդեցության մասին CDC-ին տեղեկացնելու համար: Կարող եք գրանցել մեկից ավելի անձանց մեկ հեռախոսից:



Ցանկանո՞ւմ եք իմանալ ավելին

Հավելյալ տեղեկությունների համար այցելեք <<[Պատվաստման Կողմնակի Ազդեցությունները](#)>> կայքէջ կամ սկանավորեք QR ծածկագիրը:



